ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1951 ՄԱՐՏ – ԱՊՐԻԼ Թիւ 3-4

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ էջ

Հ. ՊՕՂՈՍ ՀԱՄԵԼԵԱՆ. – Քննական ակնարկ Հայկական վաւերաթուղթի մը Տիրամօր վերափոխման մասին 49

Prof. Marc-Antoine van den Oudenrijn O. P. – Notes sur quelques ouvrages arméniens de provenance dominicaine . 61

Տոքթ. Պ. ՄԻՍԱՔԵԱՆ. – Ճշտում մը . . . 65

ԳՐԱԿԱՆ

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. – Առաւօտ 57

Հ. Մ. ՃԱՆԱՃԵԱՆ. – Արեւելահայ հրապարակագրութիւն. – Գրիգոր Արծրունի . . 58

Հ. Մ. Ճ. – Փոթորիկն ահա 67

Տոքթ. Յ. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ. – Շահմիրան–Վիշապը և երիտասարդանալու գաղտնիքը (հէքեաթ) 68

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՃԵԱՆ. – Եղիա Տէմիրճիպաշեան 72

Հ. Մ. Ճ. – Անմեղներուն 90

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. – Ժողովրդական նկարիչ Սաթփան Աղաջանեանի արուեստը . . . 79

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԽՄԲ. – Փրոֆ. Վահան Թոթոմեանց իտալական մամուլին մէջ 84

ԱՅԼ, ԵՒ ԱՅԼԲ

ԻՏԱ. – Յանուն խաղաղութեան . . . 88

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ «Բազմավէպ»ի 1949-ի «Բացառիկ»ին և 1950-ի «Գեղունի»ին շուրջ 91

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Հ. Ե. Փ. – † Հանգիստ հոգւոյ Հ. Թէոդոր Վ.ի Սիրունեան 95

SOMMAIRE

1951 Mars – Avril N. 3-4

PHILOLOGIE PAGE

P. Paul Hamélian. – Critique d'un document sur l'Assomption de la Sainte Vierge 49

Prof. Marc-Antoine van den Oudenrijn O. P. – Notes sur quelques ouvrages arméniens de provenance dominicaine . 61

Dr. B. Missakian. – Une précisation . . 65

LITTÉRATURE

Arsène Yerghat. – Matinée (poésie) . . 57

P. M. Djanachian. – Le journalisme arménien: Kıikor Artzrouni . . . 58

P. M. Dj. – La tempête (poésie) . . 67

Dr. H. Der Ghazarian. – Chahmiran le Dragon et le secret de devenir jeune . 68

P. Mesrop Djanachian. – Elie Démirdjibachian (suite de N.º 11-12 de l'année 1948) 72

P. M. Dj. – Aux innocents (poésie) . . 90

BEAUX-ARTS

Aram Yérémian. – L'art du peintre Stépan Aghadjanian 79

ECHO ARMÉNIEN

Réd. – Le Prof. V. Totomiantz dans la presse italienne 84

DIVERS

Ida. – Au nom de la paix 88

Appréciations sur l'édition Numero spécial 1949, 7-12 de «Pazmaveb» et sur l' Illustration arménienne «Keghouni» de 1950 91

NECROLOGIE

P. E. P. – † La mort du Rév. Père Théodore Sirounian 95

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 – 1951 ՄԱՐՏ – ԱՊՐԻԼ

109-ՐԴ ՏԱՐԻ Թիւ 3-4

ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՒԵՐԱԹՈՒՂԹԻ ՄԸ ՏԻՐԱՄՕՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ԲԱԶՄԱՎԷՊի նախընթաց թիւերուն մէջ[1] լոյս տեսաւ շահեկան յօդուած մը, որ կ'անդրադառնար գլխաւորապէս Տիրամօր վերափոխման մասին՝ Հայ Եկեղեցւոյ հայթայթած հնագոյն վաւերաթուղթերու վրայ։

Յարգելի յօդուածագիրը իր պատմական վկայագիրներու շարքին՝ մեզի կը ներկայացնէր Մովսէս Խորենացիի՝ Արծրունի իշխանին ուղղած պատասխանի նամակը, ուր բացայայտ կերպով կը խօսուի Ս. Աստուածածնի վերափոխման վրայ[2]։

Ներկայ պարագային, բնականաբար, այս վաւերագիրը այնքան հետաքրքրական ու արժէքաւոր կրնար ըլլալ, որքան անոր հնութիւնը բացառիկ դիրք մը գրաւած կը թուէր՝ ընդհանուր եկեղեցական միւս ծանօթ վաւերագիրներուն միջեւ։

Արդարեւ եթէ, ինչպէս յարգ. յօդուածագիրը մեզի կը ներկայացնէր, Մ. Խորենացիի նամակը Ե. դարու հարազատ գրութիւն մ'ըլլար, կրնայինք զայն եկեղեցական հնագոյն վաւերագիրներէն մին նկատել։ Սակայն ուշադիր քննութիւն մը մեզ կ'առաջնորդէ այն եզրակացութեան թէ Մ. Խորենացիի նամակը շատ ուշ ժամանակ հրապարակ ելած կեղծ գրութիւն մըն է։

ՆԱԽԸՆԹԱՑ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ԽՈՐԵՆԱՑԻԻ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԻՆ

Ֆեթթէր, գերմանացի հայագէտը, անցեալ դարու վերջերը արդէն նկատած էր Մ. Խորենացիի այս շատ հետաքրքրական նամակը և կ'ըսէր թէ «Մովսէսի այս նամակը շատ մեծ յարգ կ'ունենար իբրեւ

(1) Հ. Յ. Խայեաթ «Ս. Աստուածածնի վերափոխումը Հայոց քով» Բազմավէպ. ՃԸ. (1950), էջ 207–216։

(2) «Պատասխանի Թղթոյն Սահակայ» – Մ. Խորենացւոյ Մատենագրութիւնք. Վենետիկ, 1865, էջ 283–294։